եռապատիկ ժողովեցան գնդեցան և միացան իբրեւ զմարախ՝ բիւրք բիւրուց և հազարք հազարաց, ելին ի դուռն երկաթի և հասին ի Շամախի՝ և անտի եկեալ բնակեցան ի տեղին, ուր Երասխ և Կուր գետն խառնին ընդ միմեանս, հանդէպ բերդի դաշտին Մուղանու։»

Շամախւոյ հայ բողոքականներն չգիտեմ Լուտերականութեան որ ազանդին են պատկանում, բայց Աւետարանական չեն. բան որում գործքով Աւետարանի հոգուց շատ հեռու են, թէ և ի յոյժս մարդկան կրկնում են Աւետարանի խօսքերը, և ի հաճոյս իւրեանց ձախ ու ծուռ մեկնելով Սուրբ Գրքի՝ մանաւանդ Սուրբ Աւետարանի խօսքերը՝ աշխատում են սուտ եղբայրները խաբել և խաբբալել միամիտ գիւղացի հայերին և եկեղեցուց հեռացնել, մինչեւ անգամ համարձակում են Քրիստոսի խաչն ուրանալ։

Այս սուտ եղբայր հայ բողոքականները, որքան լսում էի, բողոքում էին մեր եկեղեցւոյ դէմ, հազարաւոր տարուց հետէ ամենայն ուղղափառ Առաքելական եկեղեցիներից ընդունուած և սրբազործուած մի քանի դաւանանքների և ծէսերի և եկեղեցական գարդերի պատճառաւ, որոց մի քանիսը օրինակի համար այս տեղ գրել կարեւոր եմ համարում, որ Լուսաւորչականք լաւ ծանօթանան նոցա հոգւոյն և գոյշանան։

Ա. Բողոքում են, թէ՝ հայոց եկեղեցւոյ ազօթքներն և երգերն գրաբար են, չենք հասկանում. նոյնպէս և Աւետարանն։

Պատասխանն է, թէ որ երկրի կամ դաւառի աշխարհաբառով գրուին եկեղեցական ազօթքներն ու Աւետարանը, որ շամախեցիք հասկանան նոյնպէս և ամենայն երկրների հայերը հասկանան, զոր օրինակ՝ Տփխիսեցիք, Ատրպատականցիք, Նոր — Նախիջեւանցիք, Ղարաբաղցիք, Տաճկաստանցիք, Պարսկաստանցիք և ամենայն տեղացիք։

Եթէ յիրաւի ցանկանում են Աւետարան կարդալ և բան հասկանալ, արդէն տպած կայ Աւետարան՝ Արարատեան պարզ